ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՆՊԱՍՏԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՇՐՋԱՆԻՆ


STIAN AND MISSIONARY ALLIANCE
ISRAEL FIELD
988
183
March 19 1990
82-5/1070
PAY TO THE ORDER OF Armenian Aid Fund $1700 00/100
One thousand seven hundred DOLLARS
United Bank
United Bank of Colorado Springs • N.A.
FOR Armenian aid - 4CCI
⑆107000055⑆ 1 240 518⑈ 0183

ՊԱՏՐ
ARCHATE

June 15, 1990

Գերապատիւ
Տ. Խաժակ Ծ. Վրդ. Պարսամեան
Առաջնորդ Հայաստանեայց Եկեղեցւոյ
Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմին,
Նիւ Եորք

Սիրելի Հայր Խաժակ,

Ձեզի կը ղրկենք փոխգիր մը $ 1700 (Հազար եօթ հարիւր տոլլար) գումարի մը որ մեզի փոխանցուեցաւ Յունիս 6ին: Այս գումարը հաճեցէք արձանագրել The Christian and Missionary Alliance կազմակերպութեան անունով: Յաւելեալ գումարներ եւս պիտի փոխանցենք Առաջնորդարանիդ [...]թեան անունին:

Այս բոլորը պէտք է յանձնուին Թեմիդ Հայաստանի երկրաշարժին Օգնութեան եւ Վերակառուցման Յանձնախումբին, եւ արձանագրել որպէս Երուսաղէմի Հայոց եւ Պատրիարքութեան նպաստը: Կը խնդրենք որ ամբողջ գումարը ստանալէն յետոյ, զայն յատկացնէք Ստեփանաւանի մէջ կառուցուելիք որեւէ մէկ բաժանմունքին ի նպաստ, հետեւեալ յիշատակութիւնը արձանագրելով " Երուսաղէմի Հայոց եւ Պատրիարքութեան նուէրը Հայաստանին":

Հաճեցէք ստացագիրը ղրկել մեր հասցէին:

Սիրոյ ողջունիւ
Աղօթարար

Թորգոմ Արքեպս. Մանուկեան
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՓՈՍՏԱՐԿՂ 14001 ՀԵՌԱՁԱՅՆ 282331 ԵՐՈՒՍԱՂԷՄ ԻՍՐԱՅԷԼ
P.O.Box 14001 PHONE

digitised by A.R.A.R.@

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

August 10, 1990

His Beatitude Archbishop Torkom Manoogian
Patriarch of Jerusalem
Armenian Patriarchate
P.O. Box 14001
Jerusalem (Old City), Israel

Your Beatitude:

Thank you for your generous donation on behalf of "The Jerusalem Armenian Community and the Patriarchate" to the Armenian Diocese Earthquake Fund for the victims of the tragedy that has befallen our brothers and sisters in Armenia. Each contribution brings continued hope and strength to the Armenian people.

With your caring support and with their own courage, Armenians will rebuild their towns, their schools, their churches and will begin the brave and painful task of putting their broken hearts back together. This rebuilding has already started in Stepanavan with the Diocesan housing project. The first building of 16 apartment units is nearly complete.

We are grateful for your continued humanitarian concern which will inspire all those who have suffered through this tragedy. May God's blessings be with you always.

Respectfully yours,

Fr. K. Barsamian

Fr. Khajag Barsamian
Primate

digitised by A.R.A.R.@

# ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ
## ARMENIAN PATRIARCHATE

№ ................ Թուական Date ................

Սեպտեմբեր 20, 1991

Գերաշնորհ
Տ. Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ Հայաստանեայց Եկեղեցւոյ
Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմին
Նիւ Եորք.

Սիրելի Սրբազան,

15 Յունիս 1990 թուակիր մեր նամակով, Երուսաղէմէն ղրկած էինք փոխգիր մը 1,700 (հազար եօթը հարիւր) տոլարի, երկրաշարժի առիթով Ստեփանաւանի մէջ կառուցուելիք բնակարաններու ի նպաստ։

Այժմ կը ներփակենք 45,000 (քառասուն հինգ հազար) տոլարի մեր փոխգիրը (թիւ 2219, Սեպտեմբեր 18, 1991 թուակիր) եւ կը խնդրենք որ 46,700 (քառասուն վեց հազար եօթը հարիւր) տոլարի ընդհանուր գումարը յատկացնէք Ստեփանաւանի մէջ կառուցուելիք բնակարաններուն ի նպաստ, հետեւեալ յիշատակութիւնը արձանագրելով. «Երուսաղէմի Հայոց եւ Պատրիարքութեան նուէրը Հայաստանին»։

Շնորհակալ պիտի ըլլանք եթէ այս գումարին ընկալագիրը ղրկէք Երուսաղէմ մեր հասցէին, եւ տեղեակ պահէք մեզ խնդրուած արձանագրութեան եւ յիշատակութեան մասին, հաղորդելու համար զայն Երուսաղէմի մեր համայնքին եւ Երկրաշարժի Յանձնախումբին։

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Պատրիարք Երուսաղէմի

REV. TORKOM MANOOGIAN
630 SECOND AVE.
NEW YORK, NY 10016

2219

18 Sept. 1991 1-30/210

PAY TO THE ORDER OF Diocese of the Armenian Church $ 45,000.—

Forty Five Thousand and NO —— DOLLARS

MANUFACTURERS HANOVER

FOR Earthquake – Jerusalem ~~Armenian Community/Patriarchate~~ Rev Torkom Manoogian

⑆021000306⑆ 113 050272165⑈ 2219

digitised by A.R.A.R.@

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Թիւ 581
Սեպտեմբեր 21, 1991

Ամենապատիւ
Տ. Թորգոմ Արք. Մանուկեան
Պատրիարք Երուսաղէմի
Երուսաղէմ.

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Ստացած եմ Սեպտեմբեր 20, 1991 թուակիր Ձերդ Սրբազնութեան նամակը եւ ներփակեալ 45,000 (քառասունըհինգ հազար) տոլարի փոխգիրը՝ Երուսաղէմի Հայոց եւ Պատրիարքութեան կողմէ Ստեփանաւանի մէջ կառուցուելիք բնակարաններու հիմնադրամին ի նպաստ:

Նախապէս ստացուած ըլլալով 1,700 (հազար եօթը հարիւր) տոլարի նուիրատուութիւն մը, ձեր փափաքին համաձայն, ընդհանուր գումարը՝ 46,700 (քառասունըվեց հազար եօթը հարիւր) տոլարը ամբողջութեամբ պիտի յատկացուի Ստեփանաւան քաղաքին մէջ կառուցուելիք բնակարաններուն ի նպաստ՝ հետեւեալ յիշատակութիւնը արձանագրելով. «Երուսաղէմի Հայոց եւ Պատրիարքութեան նուէրը Հայաստանին»:

Կը խնդրեմ որ ընդունիք անձնապէս իմ եւ Առաջնորդարանիս Հայաստանի Վերականգման Յանձնախումբի խորին շնորհակալութիւնը՝ այս մեծագումար նուիրատուութեան համար: Բարի եղէք մեր երախտագիտական զգացումները փոխանցել նաեւ Երուսաղէմի սիրելի հայ բնակիչներուն:

Ստեփանաւանի մէջ բնակարաններու կառուցման աշխատանքները երբ իրենց աւարտին հասնին՝ Երուսաղէմի Հայոց եւ Պատրիարքութեանի օժանդակութեամբ կառուցուած բաժնին եւ արձանագրուած յիշատակարանին մասին կը տեղեկացնեմ Ձերդ Ամենապատուութեան:

Քաջառողջ եւ երկար կեանքի լաւագոյն բարեմաղթութիւններով,

Կը մատչիմ ի համբոյր Ձերդ Ամենապատուութեան Ս. Աջոյն
Խոնարհաբար

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ

digitised by A.R.A.R.@